

ՏԱՃԿԱՀԱՅՔ

Տանկահայոց նորընկիւ պատրիարք Զատէն արեւայիս- կոպոս Տէր Եղիայեան

Օսմանեան Սահմանադրութիւնից յետոյ Կ. Պօլսի Հայոց պատրիարքըներն էլ մի քանի անգամ փոխուեցին: Օրմանեան պատրիարքին հրատարակելուց յետոյ, պատրիարքական դահի վերայ մենք վերստին տեսանք Բզմիրեան պատրիարքին, որտեղից նա անցաւ ասկնայն Հայոց Հայրապետական դահը, նորանից յետոյ պատրիարք ընտրուեց Դուբեան Եղիշէ արքեպիսկոպոսն, սորա հետանալուց յետոյ Յովհաննէս արքեպիսկոպոս Արչարունին, վերջապէս սորան էլ չվիճակուեց երկար պատրիարքութիւն անելու՝ հետացաւ և Ազգային ժողովը նկատելով որ այլ ևս վստիտի ավերում յաջող պատրիարքացու չկայ՝ իրենց հայեացքն ձգեցին աւելի հեռուն՝ գաւառների մէջ փնտոսեցին իրենց ընտրելին, և վիճակն ընկաւ Տիգրանակերտի առաջնորդ Զատէն եպիսկոպոսի վրայ, որին և անցեալ սեպտեմբեր ամսում ընտրեցին պատրիարք, հրաւիրեցին վարելու պատրիարքական դժուարին ու ներկայումս աւելի քան պատասխանատու պաշտօնը, և Ե լաւ էլ եզաւ՝ որ այդ ընտրութիւնը ոչ թէ Պօլսի հոգևորականներից էր, այլ հետաւոր գաւառից, այն շատ բնական պատճառով, որ Պօլսի գեղածածաղ ամերում ապրած և մեծացած հոգևորականն այնքան խոր և ճշմարիտ կերպով չէ կարող ըմբռնել Տաճկահայ բուն ժողովրդի ծով կարիքներն, որքան երկար տարիներ գաւառներում ապրած ու պաշտօնավարած հոգևորականը, որն աւելի մօտիկուց տեսել և զգացել է այն անթիւ սրտամաշ վշտերը, անձուկ վիճակը հայ բազմաշարժար ժողովրդի, նոցա կրած մեծամեծ զրկանքները քրդերի ու տաճիկ պաշտօնեաների միջոցով, որոնք խոր տպաւորուել են այդ գաւառական պաշտօնեայի սրտում ու մտքում:

Կանգ չենք առնում նորընտիր պատրիարքի կենսադրութեան վրայ, որի առթիւ պարբերական թերթերը իւր ժամանակին մանրամասն հազորդել են, այլ կասենք, որ երբ նա Բզմիրեան կաթուղիկոսի օրօք եկաւ և ձեռնադրուեց եպիսկոպոս 1910-ին, նա փայլում էր հոգևորականին վայել համեստութեամբ: Կրթութեամբ Արմաշական է, նորա դիլաւոր ուսուցիչներն են եղել Օրմանեան և Դուբեան նախկին պատրիարքները:

Տիգրանակերտից մինչև Պոլիս թէ հայ ժողովուրդը և թէ Օսմանեան կառավարութիւնը շատ փառաւոր ընդունելութիւն է ցոյց տուել նորընտիր պատրիարքին: Այդ ճանապարհորդութիւնն ևս առիթ է տուել նորընտիր պատրիարքին ի մօտոյ ծանօթանալու զանազան տեղերի ժողովրդեան կարիքներին ու խնդիրներին, իսկ միւս կողմից էլ ժողովուրդն առիթ է ունեցել իւր բազմաթիւ հոգեւորից գոնէ մի քանի ժամով, մի քանի օրով դադար առնել և ողորուել իրենց պատրիարքի ներկայութիւնը պատճառող ազգային կեանքով:

Ամենապատիւ պատրիարքը մեծ շուքով մտել է Կ. Պոլիս և սրտագին ընդունելութիւն տեսել հայ ժողովրդի կողմից, Օսմանեան կառավարութիւնն էլ իւր կողմից վայելուչ ընդունելութիւն է ցոյց տուել Հայոց պատրիարքին՝ կառավարչական «Կիւլ ձեմալ» չոզեմաւր մինչև Գալաթ ընդառաջ ուղարկելով, որտեղից և պատրիարքն իւր ուղեկիցներով այդ շոգենաւով հասել է Պոլիս: Շոգենաւից պատրիարքն անթիւ բազմութեան ուղեկցութեամբ գնացել է Մայրեկեղեցի: Այստեղ իւր յուզումնալից ողջոյնի ճառն է արտասանել: Ողջունել է զաւաթի հայ ժողովրդի կողմից—նկարագրելով նոցաներկայ կացութիւնը: Ապա պատրիարքն գնացել է պատրիարքարան, որտեղ ևս կելլ են ողջունի ճառեր, ինչպէս Հայոց Միացեալ Ընկերութեան և ուրիշներէ՝ կողմից:

Հետեւեալ օրն Ազգային ժողովում ամենապատիւ ս. Պատրիարքը կատարել է իւր Սահմանադրական ուխտը: Առանձին խորհրդաւարութիւն է ունեցել այս հանդէսը Ազգային ժողովում:

Ազգային ժողովի Ատենապետ Բժշկապետ Տաղաւարեան ծանուցանելով ամենապատիւ Պատրիարքին նորա ընտրութեան մասին հրաւիրել է կատարել Ուխտը՝ մատուցանելով Ազգային Սահմանադրութեան տետրը: Պատրիարքն առնելով Սահմանադրութեան տետրը՝ ծնրադրել է Սորանի առջև և կարդացել Ուխտի բանաձևը:

Ապա Բժ. Տաղաւարեանը խօսքն ուղղելով Պատրիարքին՝ արտասանել է հետեւեալ ճառը.

«Ամենապատիւ Սրբազան Հայր, Ձեր Բարձր Սրբազնութիւնն այժմ իր Սահմանադրական Ուխտը կատարելով կը բազմի ի դահ պատրիարքութեան սահմանադրական Հայոց Թուրքոյ. ի պաշտօնէ և յանուն ժողովոյ՝ կը շնորհաւորեմ Ձեր ընտրութիւնը:

Դուք, Սրբազան Հայր, արեղայ ձեռնադրուելուց ըստ Ձեր ուխտին զրիք Ձեր անձը ի սպաս եկեղեցւոյ ու ազգին և հազիւ տարի մը անցած Զարժանադաք առաջնորդական կարեւոր փիճակի մը խնամքը ստանձնելու. ոճանց նման Ձեզ յանձնուած աթոռը չբրիք: Ձեր հանգստեան բարձ և ոչ ալ առաջնորդական փափուկ պաշտօնի

ընական դժուարութիւններէն նեղուած ու է պատրուակով խոյս
 չտուիք գործէ Վոսփորի ամանց վրայ հանդիստ փնտռելու Դուք,
 Արբազան Հայր, 15 երկար տարիներ միշտ հլու հպատակ պատ-
 րւարքական բարձրագոյն հրամանին, իբրև Առաջնորդ, Պատր. փո-
 խանորդ, կամ լրագոր գործեցիք Պարնոյ, Վանայ, Խարբերդի և
 Տիգրանակերտի մէջ, միշտ ժիր, եռանդուն, շրջանայեաց:

Այսպէսով ճանչցաք ողջոյն Մեծ Հայքն ու մեր հէք արևնակ-
 ցաց վիշտն ու պէտքը, հայրենակից ցեղերու մտայնութիւնն ու
 անոնց մէջ ապրելու յարմար եղանակն և Օսմ. Կայս. կառավարու-
 թեան ներկայացուցիչներուն հետ վարուելու պատշաճ գործելա-
 կերպը: Ազգը պէտք ունէր իր ցուն ու կարիքը խորապէս ճանչցող
 և դարմանի մասին փորձ հովիւի մը ու իբր այդ՝ Ձերդ Արբազնու-
 թիւնը Պատրիարք ընտրեց: Անգամ մը ևս կը շնորհաւորեմ Ձեր
 ընտրութիւնը: Կեցցէ Տ. Զաւէն Պատրիարք Թբթահայոց»:

Սորանից յետոյ առանձին խորհրդաւորութեամբ ամենքն ուն-
 կընդրեցին Պատրիարքին, որն ասաց հետեւեալը:

«Շնորհակալութեան խորին զգացումով կուզամ քանի մը
 խօսք ընել Պատկ. Երեսփ. ժողովին և համայն ժողովրդեան, որ
 ներկայ գտնուեցաւ այն ուխտին, զոր ըրի ս. Խորանին և ժողովր-
 դեան առջև: Խորին շնորհակալութիւն ազգին ձայնը ներկայացնող
 Երեսփոխանական ժողովին, որ իմ անուանա շուրջ միացնելով իր
 քուէները, պատիւ ըրաւ զյս հրաւիրելու որ վարեմ ազգին զոր-
 ծերուն ղեկը: Այն Ուխտը, զոր ըրի քիչ առաջ, առաջինը չէր, նոյն
 ուխտն ըրի նաև իմ երկար ճամբորդութեանս ընթացքին այն ժո-
 ղովրդեան առջև, որ ընդունեց զիս, Ուխտ մը թէ հաւատարիմ
 պիտի գտնուիմ իրենց և անձնութիւնն ու անկեղծութիւն ցոյց
 պիտի տամ ժողովրդային շահերը պաշտպանելու մէջ, սակայն այդ
 Ուխտն ալ նոր չէր, նոյն Ուխտն ըրի սքեմին տակ մտած ատենս.
 Կ'կարծեմ որ իբր Հայու դաւակ ծնած օրս ալ այդ ուխտն ըրած
 եմ: Այսօր երրորդ ուխտն է՝ որ կընեմ ուրեմն, և վստահ եմ թէ
 Աստուած չպիտի սայթաքեցնէ իմ քայլերս, վնասակար չըլլալու
 համար ազգիս և կառավարութեան, որոնց երկուքին շահերն ալ
 սերտօրէն կապուած են իրարու, զի կառավարութեան փառքը
 կ'աւելանայ, երբ ազգը բարձրանայ: Աղջին բարգաւաճումը ի վեր-
 ջոյ Տէրութեան բարգաւաճումն է:

Գաւառի ժողովուրդն իր վիշտերուն դարմանը կ'ակնկալէ-
 այդ ժողովուրդին առաջին պէտքը կեանքին, ինչքին և պատուին
 ապահովութիւնն է, թէ ևս և թէ ժողովներն որքան կորովի քայլեր
 առնենք, ժողովուրդին այդ առաջին պէտքն երաշխաւորելու հա-
 մար, նոյնքան սատարած կ'ըլլանք Տէրութեան տեսականութեանը:
 Այդ ժողովուրդին կրօնական, տնտեսական պէտքերն և կրթութիւնն

այ աչքէ պէտք չէ վերագնանք: իմ նախագահութեանս տակ գրտնուող ժողովները վնասն եւմ թէ իրենց ուշադրութիւնը պիտի դարձնեն դէպի գաւառը: որտեղի ժողովուրդը մեզմէ կրտսասէ ամեն անդորրութիւն, ամեն յատաճայիմութիւն: Ես գաւառի և Պոլսոյ ազգային ժողովներուն միջև միութեան կայ մը պիտի կազմեմ, բնական է, որ պիտի չդաւաճանեմ գաւառին և ոչ այ կիցրոնին: Վնասն եւմ թէ Ազգ. ժողովը քիչ մը աւելի խոճականութեամբ և քիչ մը աւելի սուղ նկատելով իր ժամանակը, ինչպէս նաև միւս Մարմինները, քիչ մը աւելի անձնուիրութեամբ աշխատելով շատ շուտ պիտի կրնանք հասնիլ այն նպատակին՝ որուն կրճգտենք: Քիչ առջ բտեցաւ թէ պատրիարքական Գաւազանը և Աթոք փշտ են: սակայն ես պիտի աւելադնեմ որ ազգը դարերէ ի վեր փուշի վրայ է. այսքան երկար ատեն գաւառ մնացած ըլլալով մարմինս կոչացած է, այնպէս որ փուշերը չպիտի կրնան ազգի վրաս (բռնն ծափեր), և վտան եւմ որ Ազգ. ժողովին օժանդակութեամբ պիտի կտրտեմ այդ փուշերը և Աղքը լաւագոյն օրերու պիտի առաջնորդեմ: միայն թէ առանց կուսակցական և դաւանական խարութեան երբ միայններ մեր ջանքերը, շատ շուտով պիտի կրնանք հասնիլ մեր նպատակին: Կ'մաղթեմ որ Աստուած իր հովանին տարածէ Ազգին վրայ:

Ամենապատիւ Տ. Պատրիարքն նոյնմբերի 12-ին ներկայացել է Օսմանեան Սուլթանին Տօլմա Պաղչէի պալատում: Կայսրն ոտքի վրայ ընդունել է ս. Պատրիարքին և նորա հետերդներին: Պատրիարքն Սուլթանին ճառ է կարդացել, որից յետոյ Սուլթանը պատասխանել է հետևեալը. «Ձեր բակախօսութեան մեջ պարզուած զգացումներէն զոն եմ: Հայ ազգն այս երկրին ամենէն հաւասարիմ տարերէն մըն եղած է, վստահ եմ, որ Ձեր բարւոյն ջանքերով պիտի տարուակի եղն շաղիկն մեզ՝ օգտակար ծառայութիւններ մատուցանելով Օսմ. երկրին, որ պիտի ապահովէ իր բարօրութիւնը: Այս իմ մեծազոյն փափաճեցումն մըն է»:

Ապա նոյն օրը Պալատում արարողապետն բերել է ու նորհաւորութեամբ Նորին Բարձր Արքայութեան մատուցել Ա. կարգի Մեծիօրից պատուանշանը:

Պալատից մեկնել է Պատրիարքն ու այցելութիւն տուել զԸԼԻխաւոր Նախարարաց. Իսկ ժամը 4 1/2-ին նոյն օրուայ մեծ շուքով մտել է Մայր եկեղեցի ու խօսել ժողովրդեան իւր, Սուլթանի և Նախարարների մօտ ունեցած, ընդունելութեանց մասին:

Բ. Վ. Ա.